Հաստատված է
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
2015 թվականի մարտի 31-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՊՄՀ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն ընթացակարգով սահմանվում են ՀՊՄՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման և ուսանողների կողմից փորձագիտական գնահատման հետ կապված հարաբերությունները:

1.2 Ընթացակարգը հաստատում, գնահատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում է ՀՊՄՀ գիտական խորհուրդը:

1.3 Ընթացակարգի ներդրումը նպատակ ունի զարգացնելու ուսանողների կողմից դասախոսներին տրվող հետադարձ կապի և համապատասխանաբար, կրթական ծառայությունների որակը պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման և փորձագիտական գնահատման գործընթացների կանոնակարգման միջոցով:

1.4 **Հիմնական հասկացությունները՝** պրոֆեսորադասախոսական կազմ, ինքնագնահատում, փորձագիտական գնահատում, հետադարձ կապ, գործունեության արդյունավետության չափանիշներ:

1.5 Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ինքնագնահատումը որակի ապահովման կարևոր կառուցակարգ է, որն իրականացվում է այդ նպատակով

մշակված գործիքակազմով և համալսարանի ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցով: Ինքնագնահատման նպատակը մասնագետների կողմից սեփական գործունեության վերլուծությունն է, դրա ուժեղ կողմերի բացահայտման, և գործունեության շարունակական բարելավման նպատակով:

1.6 Պրոֆեսորադասախոսական անձնակազմի փորձագիտական գնահատումը որակի ապահովման կարևոր կառուցակարգ է, որն իրականացվում է այդ նպատակով մշակված գործիքակազմով և համալսարանի ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցով:

2. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Ինքնագնահատման և փորձագիտական գնահատման գործընթացի **սկզբունքներն են՝** համակարգային մոտեցումը, փորձագետների անկախությունն ու ընտրության հիմնավորվածությունը, գնահատման և ինքնագնահատման գործիքակազմի համապատասխանությունը, .

2.2. Ինքնագնահատման և փորձագիտական գնահատման բոլոր սկզբունքները ենթակա են նախնական և ամփոփիչ գնահատման, որի կարգը սահմանվում է համալսարանի որակի ապահովման կառույցի կողմից:

2.2.1. **Համակարգային մոտեցումը**, որն արտահայտվում է գնահատման գործընթացի բոլոր բաղադրիչներում՝ մեթոդների ընտրություն, փորձագիտական կազմի հավաքագրում, ինքնագնահատում փորձագիտական գնահատում և այլն, սկզբունքների և նպատակների միասնականության, փոխլրացնող մոտեցումների առկայությամբ:

2.2.2. **Փորձագետների անկախությունը և ընտրության հիմնավորվածությունը**, որն արտահայտվում է փորձագետների՝ գնահատվող անձանց հետ բարեկամական կամ թշնամական փորձագիտական և վերլուծական խմբի բարձր իրազեկվածությունը գնահատման ենթակա խնդիրների ոլորտում:

2.2.3. **Գնահատման գործիքակազմի համապատասխանությունը գնահատման նպատակին ու խնդիրներին:** Ինքնագնահատման և գնահատման գործիքակազմը պետք է պիտանի լինի գնահատման համար: Պիտանիությունը, հավաստիությունը և հուսալիությունը ենթակա են գնահատման համապատասխան ոլորտի առնվազն երեք անկախ փորձագետների կողմից, որոնք պետք է ներկայացնեն եզրակացություններ գործիքակազմի հավաստիության և կիրառման նպատակահարմարության վերաբերյալ:

2.2.4. **Գնահատման ընթացակարգի թափանցիկությունը և հասանելիությունը գնահատողներին ու փորձագետներին:** Այս սկզբունքն արտահայտվում է որակի ապահովման բաժնի կողմից բոլոր շահառուներին պատշաճ կարգով նախապես գնահատման գործընթացի մասին տեղեկատվության մատուցման և դրա արդյունավետության մասին հետադարձ կապի տեսքով կարծիքների հավաքագրման և վերլուծության կառուցակարգերի առկայությամբ:

3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

3.1. **Ինքնագնահատման և փորձագիտական գնահատման** հավաստիության և հուսալիության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել հետևյալ պայմանների առկայությունը.

3.1.1. Ինքնագնահատումն ու փորձագիտական գնահատումն իրականացվում է նույն չափանիշների հիման վրա, ինչը հնարավորություն է տալիս դասավանդողներին ավելի լավ հասկանալ գնահատման պահանջները և ընտրել մասնագիտական ինքնազարգացման համարժեք ուղիներ:

3.1.2. Ինքնագնահատումը հնարավորություն է տալիս կառուցել գնահատման գործընթացի սխեման, նրա մասնագիտական զարգացման մեթոդական առաջարկների մշակման, ինչպես նաև ռեֆլեքսիվ կարողությունների ուսումնասիրության համար;

3.1.3. Փորձագետները պետք է հատուկ պատրաստություն անցնեն և ծանոթ լինեն փորձագիտական գնահատման միջոցներին ու չափանիշներին, ինչպես նաև նախապես հնարավորություն ունենան մանրամասն ուսումնասիրել դասավանդողների ինքնագնահատման արդյունքները:

3.1.4. Փորձագիտական գնահատումն իրականացվում է առնվազն 2 անկախ փորձագետների կողմից:

3.1.5. Փորձագետների գնահատականների էական անհապատասխանության դեպքում պետք է կազմակերպել լրացուցիչ քննարկումներ ընդհանուր համաձայնության հասնելու նպատակով:

3.1.6. Փորձագետները անհրաժեշտության դեպքում կարող են կիրառել լրացուցիչ գնահատման գործիքակազմ, որի կիրառման ընթացակարգը, ինչպես և մեթոդները պետք է համապատասխանեն գնահատման սկզբունքներին ու չափանիշներին:

3.1.7. Գնահատման համակարգի հարմարեցման, հուսալիության և հասանելիության ապահովման համար ֆակուլտետի անդամները կարող են մասնակցել դրա մշակման և լրամշակման, ինչպես նաև գործունեության արդյունավետության չափանիշների ընտրության գործընթացներում:

3.1.8. Փորձագետները պատասխանատու են իրենց գնահատման մեթոդների մշակման և չափանիշների ընտրության համար, քանի որ տարբեր գիտակարգեր պահանջում են տարբեր մոտեցումներ, մեթոդներ և հրահանգավորման պայմաններ:

3.1.9. Գնահատման գործիքակազմի և գործունեության արդյունավետության չափանիշների համալսարանական համատեելիության ապահովման համար չափորոշիչները պետք է քննարկվեն, դիտարկվեն, հասկանալի և հասանելի լինեն այդ գործընթացում ներգրավված բոլոր կողմերի համար:

4. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1. Սույն ընթացակարգով սահմանվող և որակի ապահովման մյուս չափանիշների, ուսումնական տարբեր ռեսուրսներին ներկայացվող պահանջների միասնականության ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել դրանց շարունակական համեմատություն և համապատասխան վերլուծություններ

4.2. Պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման և փորձագիտական գնահատման չափանիշները մշակվել են **ուսումնական ռեսուրսների արդյունավետության գնահատման հետևյալ չափանիշների հիման վրա**.

4.2.1. Մասնագիտական կրթական ծրագրին համապատասխանությունը,

4.2.2. Գիտական հիմնավորվածությունը և դասընթացի ժամանակակից գիտելիքներին համապատասխանությունը,

4.2.3. Համապատասխանությունը միասնական մեթոդիկային, /պարզից բարդ, նյութերի մատուցման հաջորդականության ապահովում և այլն/,

4.2.4. Փաստացի սխալների, անբարո, էթիկային նորմերին չհապատասխանող բովանդակության բացակայություն,

4.2.5. Տեխնոլոգիական որակների /տպագրության որակ և այլն/ արդյունավետությունը /համապատասխանություն որակի տեխիկական չափորոշիչներին/

4.2.6. Ուսուցման /դասավանդման և ուսումնառության/ ամբողջականության և Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների ապահովում՝ տեղեկատվության ստացում, գործնական պարապմունքներ, ատեստավորում, բոլոր պայմանների՝ լաբորատոր, նոր նյութի յուրացում, կոլեկտիվ ուսուցում և այլն /Օր.՝ գիրքը հաճախ ապահովում է միայն տեղեկատվության ստացումը/

4.2.7. Ինտերակտիվ բնույթը, որն ապահովում է ինքնուրույն աշխատանքների սպեկտրի ընդլայնումը ուսումնառության ակտիվ միջոցների

կիրառմամբ /հնարավոր է իրականացնել տնային աշխատանքների համեմատության շնորհիվ, որտեղ ինտերակտիվ կարող է գնահատվել գործնական առաջադրանքների առկայությունը, զուտ պասիվ հայեցողական բնույթի հանձնարարությունների փոխարեն/,

4.2.8. Նոր կրթական, մանկավարժական գործիքակազմի կիրառում՝ ինտերակտիվ ուսուցում, մոդելավորում, մուլտիմեդիա, հեռահաղորդակցում, արտադրություն և այլն:

5. ՀՊՄՀ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ և ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

5.1. Ինքնագնահատման և փորձագիտական գնահատման գործընթացն իրականացվում է որակի ամբողջական կառավարման սկզբունքներով:

5.2. Ինքնագնահատման և փորձագիտական գնահատման փուլերը:

5.2.1. **1-ին փուլ- նախապատրաստում**: 1 – ին փուլում նախապատրաստվում են ինքնագնահատման և փորձագիտական գնահատման գործիքակազմը, հավաքագրվում են նախնական տվյալներ և տեղեկություններ գնահատման ենթակա չափանիշների մասին, ստացվում են համապատասխան հայտեր ֆակուլտետներից գնահատվողների վերաբերյալ, ճշգրտվում են գործընթացի ժամկետները, նախապատրաստվում են բոլոր անհրաժեշտ նորմատիվ - իրավական փաստաթղթերը /հրամաններ, պայմանագրեր, համաձայնագրեր, և այլն/, տրամադրվում են ինքնագնահատման ձևաչափերը, ընտրվում են փորձագետներ:

5.2.2. **2-րդ փուլ ինքնագնահատում:** 2-րդ փուլում իրականացվում է ինքնագնահատման գործընթաց համաձայն հաստատված ժամանակացույցի և ձևաչափի /Հավելված 2/, և դրանց արդյունքները ներկայացվում են համալսարանի որակի ապահովման ստորաբաժանում: Ինքնագնահատման ընթացքում, որպես կանոն, ներգրավվում են տվյալ դասավանդողի ուսանողները և գործընկերները:

Ինքնագնահատման ժամկետները, որպես կանոն, սահմանվում են որակի ապահովման ստորաբաժանման կողմից:

5.2.3. **Փորձագիտական գնահատում**: 3 – րդ փուլում ինքագնահատման արդյունքների վերլուծության հիման վրա փորձագիտական խումբն իրականացնում է ներկայացված չափանիշների փորձագիտական գնահատում: Փորձագետների կազմն ընտրվում է որակի ապահովման ստորաբաժանման կողմից: ֆակուլտետի խորհրդի կողմից փորձագետներին կազմին հավանություն տալու դեպքում, խորհրդի նիստի համապատասխան որոշման հիման վրա համալսարանի ղեկավարը հրամանագրում է փորձագիտական խմբի կազմը՝ հստակ սահմանելով նրանց գործունեության ժամկետներն ու պարտականությունները:

5.2.3.1. Փորձագիտական խումբը մեկ աշխատանքային շաբաթվա ընթացքում ուսումնասիրում է դասավանդողների կազմի ինքնագնահատման արդյունքները, այնուհետև իրականացնում փորձագիտական հետազոտություն, ինքնագնահատման մեջ ներկայացված տվյալների ճշգրտման, անկախ բնութագրերի ստացման և փորձագիտական զեկույց /հաշվետվություն/ պատրաստելու նպատակով:

5.2.3.2. Փորձագիտական գնահատման արդյունքները փորձագետների կողմից ենթարկվում են նախնական մշակման և ձևականացման, և հնարավորության դեպքում վերլուծական մարմին /որակի ապահովման ստորաբաժանում/ են ներկայացվում հետազոտական տվյալների ձևականացման չափանիշներին համապատասխան տեսքով ներկայացվում են փորձագիտական զեկույցի մեջ: Հնարավորության դեպքում զեկույցում առկա տվյալները պետք է պարունակեն դիագրամներ, հիստոգրամներ և/կամ այլ ձևականացման գործիքներ:

5.2.4. Արդյունքների վերլուծություն և որոշման ընդունում: **4-րդ փուլում** փորձագիտական զեկույցի արդյունքների հիման վրա կազմվում են վերլուծություններ և գնահատականներ պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման և փորձագիտական գնահատման արդյունքների շուրջ, որոնք

ներկայացվում են ամփոփ հաշվետվության տեսքով համալսարանի ղեկավար մարմնին:

5.2.4.1. Գնահատման արդյունքների հիման վրա կազմվում է ամփոփ զեկույց, հաշվետվություն, որտեղ մանրամասնորեն վեր են լուծվում դասավանդողի կարողությունների համապատասխանությունը սույն ընթացակարգով նախատեսված չափանիշներին, պայմաններին:

5.2.4.2. Հաշվետվությունը պետք է պարունակի նաև տեղեկատվություն և գնահատականներ ինքնագնահատման և փորձագիտական գնահատման գործընթացի վերաբերյալ:

5.2.4.3. Զեկույցը պետք է պարունակի հստակ գնահատականներ այս կամ չափանիշի արտահայտվածության վերաբերյալ, ինչպես նաև մեթոդական առաջարկներ թերությունների, բացթողումների վերացման, չափանիշի կամ չափանիշների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

5.3. Փորձագետների գործունեությունը համակարգում է համալսարանի որակի ապահովման ստորաբաժանումը:

5.4. Ինքնագնահատման և փորձագիտական գնահատման ընթացքում կիրառվող գործիքակազմը պետք է համապատասխանի սույն ընթացակարգի նշված պահանջներին, ինչպես նաև պետք է համադրելի լինի բուհի ուսումնական ռեսուրսների գնահատման գործիքակազմի հետ:

5.5. Ինքնագնահատումն ու փորձագիտական գնահատումն իրականացվում է դասավանդողների ինքնագնահատման, դասավանդողից սովորողների բավարարվածության գնահատման, դասավանդողների հետ անհատական և խմբային, հարցազրույցի, դասերի վերլուծության, ներկայացված նյութերի շնորհակալագրերի, պարգևների, տույժերի և այլ փաստաթղթերի վերլուծության կոնտենտ վերլուծության միջոցով: Գնահատման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել նաև այլ մեթոդներ, որոնք ենթակա են գնահատման սույն ընթացակարգի պահանջների տեսանկյունից:

5.6. Գնահատման ընթացքում կարող են կիրառվել սոցիալական գիտություններում ընդունված որակական և քանակական հետազոտության մեթոդներ և ընթացակարգեր

5.7. Գնահատումը կազմակերպվում և իրականացվում է որակի ներքին ապահովման կառույցի պատասխանատուների կողմից՝ հիքմ ընդունելով համապատասխան չափանիշները և հավելված 1-ում ներկայացված գործիքակազմը:

5.8. Մշակված չափանիշներին համապատասխանության դեպքում ներկայացվում է առաջարկ գործատուին՝ ռեսուրսի պահպանման /տես պահպանման, խմբագրման մասին կետը/ կամ բարելավման, վերանայման մասին:

5.9. Ամփոփ զեկույցը պետք է մանրամասնորեն նկարագրի ռեսուրսի բնութագրերը, . ինչպես նաև կարող է ներառել առաջարկներ ՝ հաջողված փորձի տարածման վերաբերյալ;

5.10. Վերանայման առաջարկներն ու հանձնարականները պետք է հիմնվեն ստացված հետադարձ կապի կառուցակարգերի և ազդող ուժերի ու գործոնների համակողմանի վերլուծության վրա:

5.11. Կոնկրետ գնահատման գործիքակազմի ընտրությունը կարող է փոփոխվել՝ կախված կրթական ծրագրի առանձնահատկություններից՝ նախապես համաձայնեցնելով որակի ապահովման ներքին գնահատման կառույցի հետ:

6. **ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

6.1. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդում հաստատվելու պահից:

6.2. Սույն ընթացակարգը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են գիտական խորհրդի որոշմամբ:

6.3. Սույն ընթացակարգով չեն կարող սահմանվել ՀՀ օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը հակասող դրույթներ:

Հավելված 1. Ինքնագնահատման և փորձագիտական գնահատման գործիքակազմի ձևաչափ

Գնահատման չափանիշներ	Համաձայն չեմ	Համաձայն եմ, սակայն միշտ չէ, որ արդեն է	Որպես կանոն, համապատասխանում է իրավիճակին	Լիովին համապատասխանում է իրավիճակին	Խնդրում ենք մանրամասնել ձեր գնահատականը, ներկայացնելով վերլուծություններ, փաստեր և կցելով հիմնավորող փաստաթղթեր հավելվածի տեսքով

Դասավանդման ընթացքում մատուցվող տեղեկատվությունը կարևոր է և նշանակալի**g** ուսանողների մասնագիտական զարգացման համար					*Ներկայացնել փաստեր, օրինակներ և այլ հիմնավորումներ ուսանողներին մատուցված տեղեկատվության կարևորության և մասնագտական ծրագրին համապատասխանության վերաբերյալ*

Ուսումնական դասընթացի դասանյութի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող վերջնարդյունքները հստակ են ձևակերպված և համապատասխանում են դասընթացի ծրագրին և առարկայական նկարագրին					*Ներկայացնել փաստեր և վերլուծություններ դասընթացի ակնկալվող կրթական արդյունքների, դասընթացի բովանդակության և գիտելիքների ու կարողությունների ստուգման չափանիշների համապատասխանության վերաբերյալ*
Դասավանդումը նպաստում է սովորողների ուսումնական ձեռքբերումների աճին					*Ներկայացնել կոնկրետ փաստեր և օրինակներ:*

Տրամադրված ուսումնական տեղեկատվությունը նոր է ու և համապատասխանում է գիտական ժամանակակից նվաճումներին					Ներկայացնել առաջավոր փորձի հետ համեմատության օրինակներ և այլ հիմնավորումներ
Ուսումնական նյութը մատուցում է պարզ, հասկանալի, հետաքրքիր կերպով					Ներկայացնել ուսանողների կարծիքներ և գնահատումներ

Դասավանդման և խորհրդատվության ընթացքում կիրառվող մեթոդները նպատակահարմար են ուսումնական նյութին և արդյունավետ					Ներկայացնել ուսումնամեթոդական փաթեթից կոնկրետ օրինակներ, ուսանողների կարծիքներ և գնահատումներ,
Առաջարկվում **և** հետևողականորեն կիրառվում են ուսումնական արդյունքների գնահատման պահանջների հստակ չափանիշներ					Ներկայացնել գնահատման, գիտելիքների, կարողությունների ստուգման մեթոդները և դրանք հիմնավորող փաստերը, ուսանողների կարծիքները և գնահատումները չափանիշի վերաբերյալ

Ուսանողների հետ փոխհարաբերություններում օգտագործվում են հաղորդակցման և փոխազդեցության համարժեք միջոցներ					Ներկայացնել ուսանողների կարծիքներ և գնահատումներ
Դասավանդողի խոսքը պրոֆեսիոնալ է, արտահայտիչ և հասկանալի, **արդյունավետ** է ըստ տեմպի և ձայնի ուժգնության, հնարավորություն է տալիս գրառումներ կատարել					Ներկայացնել ուսանողների կարծիքներ և գնահատումներ

Խթանում է ուսանողների ստեղծագործական գործունեությունը					Ներկայացնել ուսանողների կարծիքներ և գնահատումներ, սեփական մեկնաբանություններն ու վերլուծությունները
Ունի դասավանդման իր յուրօրինակ ոճը, որը նպաստում է ուսանողների ուսումնական հետաքրքրությունների աճին ուսումնամասնագիտական գործունեության որակի բարձրացմանը					Ներկայացնել ուսանողների կարծիքների և գնահատումների արդյունքները

Ցանկալի է, որ նա հետագայում շարունակի մեզ դասավանդել որպես /նշել համապատասխան տարբերակները/ • Կուրսային աշխատանքի, թեզի ղեկավար, խորհրդատու • Պրակտիկայի մեթոդիստ • Տեսական դասընթացի դասախոս • Սեմինար և գործնական պարապմունքներ վարող • Այլ /մանրամասնել մեկնաբանությունների բաժնում/					Ներկայացնել ուսանողների կարծիքներ և գնահատումները չափանիշի վերաբերյալ;

Հավելված 2. Ինքնագնահատման գործընթաց համաձայն հաստատված ժամանակացույցի և ձևաչափի